Ռափայել Պատկանյան

Ամպամած Մասիս

Հրսկա Մասիսը ճակատը պարզեց,
Անուշ ժրպիտը ցոլաց աչերեն,
Ամպրոպի ձայնով ահեղ նա գոչեց
Ու այսպես ասաց Ղազիբեգ սարին:

«Գինեճա՛ն եղբայր, ինչո՞ւ ես թրմրած,
Ամոթ չէ՞ անհոգ մընաս դու այսքան .
Զարթե՛, աչերդդ ճմռե՛ քընեած,
Տե՛ս, ի՞նչ է անում եղբայր մեր Բալքան» . . .

Գիտեմ, տեսել եմ, ասաց Ղազիբեգ,
Բալքանի բախտը շնորհ է Վալգային .
Այդ շնորքից մասնիկ չի հասնիլ երբեք
Ո՛չ իմ զավակաց և ո՛չ քու հային:

«Ես շնորհը չուզեմ, ասաց Արարատ,
Օտարին, փըշրանք շան առջև ձրգած,
Ես ունիմ որդիք՝ որդիք հարազատ,
Ու թիվն է նոցա հինգ միլիոն համրած:

Դու մեկ դիր ականջ, ի՛նչպես ձայն կուտամ
Իմ համատարած ցըրված հայերուն,
Տե՛ս, ի՛նչպես որդիքս պիտ վազեն, պիտ գան

Տալ Հայաստանին արագ օգնություն»:

Ասաց ու ձայնը ձըգեց նա ուժգին,
Թընդացին դաշտեր, հովիտներ, ձորեր,
Գետերն վախեցին ընթացքը նախկին,
Ալեկոծվեցան կապուտակ ծովեր:

«Եկեք, իմ որդիք, եկե՛ք դուք արագ,
Ահա՛ բացվեցավ դուռն ազատության,
Ահա՛ ցանկալին հասավ ժամանակ,
Ձախել-ջախջախել ըստըրկի շըղթան:

Դո՛ւ, կաթողիկոս, հորինե՛ կոնդակ՝
Ձորեն Խոխոցիմ գեղի Հովսեփին,
Դո՛ւ, եպիսկոպոս, գըրե հորդորակ՝
Ներման հոգեշունչ սուրբ Եղիշեին:

Դո՛ւ, երեց, ձեռք առ Սուրբ Գիրք ու մահակ
Ներման անվեհեր, արի Ղևոնդին,
Խոսքով ու գործքով եղի՛ր օրինակ,
Վառե՛ սրտերը իմ ժողովըրդին:

Դո՛ւ, Հայ զորապետ, գըթա հայերին,
Ինչպես գըթաց քու նախատիպ վարդան,
Քաջություն շընչե՛ վախկոտ սըրտերին,
Սովրեցո՛ւր խաղցնել թուր ու հըրացան:

Մի՞թե կըդասես, ո՞վ վաճառական,
Քու գանձը գեր քան փառքը քու ազգին,
Սիրական եղբարց քու ազատության
Մի՞թե չես զոհիլ քու դիզած ոսկին:

Ու դո՛ւ, ազգ հայոց, քեզ պետք է սովրել

Մի անգամ թափել արյուն հորդառատ,
Քանց կյանք ըստըրկի հավիտյան տանել,
Քանց արյուն ոթել ամեն օր կաթ-կաթ:

Այսպես խոսեցավ միամիտ Մասիս,
Ղազիբեգ քըթի տակ շատ ծիծաղեց . . .
Գընացին անցան օր, շաբաթ, ամիս,
Ոչ ոք հայերից տեղեն չըշարժեց:

Մասիսը նորից ու նորից խոսեց,
Բայց նորա խոսքը օդի մեջ կորան,
Հայրը յուր որդոց անհամբեր սպասեց,
Որդիքը խեղճ հոր օգնության չեկան:

Խորունկ խոցվեցավ Մասիսի հոգին,
Որ զսվակներեն մընաց անայցել . . .
Եվ այդ օրիցը խըղճուկ ծերուկին
Դեմքն է ամոթից ամպամած դարձել: